ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԻՆ ՀԱՆԴԻՄԱՆ

ՇԱԽԿՅԱՆ Գ. Ս.

1990-ական թվականների սոցիալ-տնտեսական դժվարին պայմանները գիտության մյուս ոլորտների թվում բացասաբար անդրադարձան նաև ճարտարապետական գիտության վրա: Գրեթե դադարել են ճարտարապետաքաղաքաշինական բնագավառի արդիական և հրատապ խնդիրներին վերաբերող, ոլորտի տեսությունն ու պրակտիկան լուսաբանող հիմնարար աշխատությունները, քննական-վերուծական ուղղվածությամբ հրապարակումները, չեն հրատարակվում կամ հազվադեպ են հրատարակվում մասնագիտական շատ հանդեսներ և պարբերականներ: Չեն բարձրացվում ծրագրային, լայնամասշտաբ, արդիական և հեռանկարային խնդիրներ, հուշ են դարձել հայ արվեստին և ճարտարապետությանը նվիրված հանրապետական և միջազգային գիտաժողովները: Բյուջետային փոքր հատկացումները քիչ են նպաստում գիտահետազոտական աշխատանքների ծավալմանը, արդյունքների ներդրմանը, փորձարարական և տեսական հետազոտությունների խորացմանը: Չեն գործում ոլորտի գիտահետազոտական մի շարք ինստիտուտներ, լաբորատորիաներ, փակվել են կամ միայն ձևականորեն են պահպանվում նախագծային շատ կազմակերպություններ: Գիտական-մասնագիտական խնդիրներն անբավարար են արծարծվում և քննվում մամուլում, հեռուստատեսության, ստեղծագործական, գիտական-մասնագիտական շրջանակներում:

Կարելի է ասել, որ ճարտարապետական գիտությունն այսօր ոլորտի հրատապ և կենսականորեն անհրաժեշտ հիմնախնդիրների լուծման առաջատար դերում չէ: Ճիշտ չէ այդ ամենը բացատրել միայն աննպաստ պայմաններով: Դրա պատճառները նաև խոր կառուցվածքային են. ճարտարապետական-շինարարական ոլորտը՝ իր հիմ-նախնդիրներով, ցրված է տարբեր նախարարությունների և գերատեսչությունների միջև, որոնք թե՛ գիտահետազոտական և թե՛ կիրառական խնդիրներով զբաղվում են իրարից անջատ, առանց համագործակցության և որոշակի նպատակամղվածության: Դրանով է պայմանավորված, որ վերջին տարիներին տնտեսության զգալի աշ-խուժացումը և երկրում կատարվող լայնամասշտաբ շինարարական-ճարտարապետական աշխատանքներն անդրադարձ չունեն գիտահետազոտական ոլորտում և դրա աշխուժացման երաշխիք չեն տալիս: Մենք այսօր չունենք ճարտարապետական-քաղաքաշինական զարգացման հայեցակարգ, գաղափարախոսություն. ինչի՞ ենք ձգտում, ի՞նչ խնդիրներ ենք լուծում, ի՞նչ ենք հավելում մեր ճարտարապետական ժառանգությանը: Լեոնարդո դա Վինչին է ասել. «Տեսությունը զորավար է, պրակտիկան՝ զինվորներ»: Առանց տեսության պրակտիկան կույր է, կարող է խարխափել և կորցնել ճամփան: Ավելորդ է ասել, որ ճարտարա-պետական գիտության աննպաստ վիճակն ուղղակիորեն անդրադառնում է ճարտարապետական պրակտիկայի

վրա, ինչը հանգեցնում է մեծաթիվ չլուծված հիմնախնդիրների առաջացման՝ անցանկալի և անկանխատեսելի հետևանքներով:

Ակադեմիկոս Ալ. Թամանյանը 1920-ական թթ. սկզբի 50 հազարից էլ պակաս բնակչություն ունեցող Երևանի զարգացման գլխավոր հատակագիծը կազմեց 150 հազար բնակչության հաշվով: Դա մեծագույն ռիսկ էր, լավատեսության և հեռանկարայնության արդյունք 1-2-հարկանի կավաշեն տներով, խառնիճաղանջ փողոցներով, փոշու մեջ կորած գավառական քաղաքի ապագայի հանդեպ: Սակայն շատ կարճ ժամանակահատվածում արհեստական գերաճի հետևանքով Երևանի բնակչության թիվը գերազանցեց այդ կանխատեսումը, և դուրս եկավ, որ Թամանյանն իր հաշիվների մեջ սխալվել է: Սակայն սխալվողը ոչ թե Թամանյանն էր, այլ քաղաքի և երկրի կառավարիչներն էին, որոնք ինչ-ինչ նկատառումներով բացեցին մայրաքաղաքի բոլոր դռները, և հեռու ու մոտ բնակավայրերի բնակիչները փոխադրվեցին Երևան՝ ապրելու, սովորելու, աշխատանք գտնելու հեռանկարով: Դատարկվեցին շատ գյուղեր, մայրաքաղաքի վարչական տարածքի մեջ մեխանիկորեն ներառվեցին Շորբուլաղը, Շահումյանը, Վերին Ջրաշենը, Սովետաշենը, Հաղթանակը, Քանաքեռը և այլն, ինչի հետևանքով հանրապետության բնակչության կեսից ավելին հայտնվեց մայրաքաղաքում՝ անզուսպ տարածվելով Արարատյան դաշտավայրով մեկ, ստեղծելով մի անհամասեռ և անհամամասն ագլոմերացիա: Առաջ է եկել քաղաք-պետություն՝ պետության մեջ, գործնականորեն դառնալով անկառավարելի, որից դուրս գալու հնարավոր ելքը իրավացիորեն համարվում է մայրաքաղաքը վարչատարածքային, քաղաքաշինական և այլ առումներով ապակենտրոնացնելը:

Մենք անթույլատրելիորեն խաթարեցինք մեծ ճարտարապետի շատ այլ մտահղացումներ՝ Օղակաձև զբոսայգին, Գլխավոր պողոտան, Կորյունի (Կիրովի) փողոցը, ուսանողական, առողջապահական թաղամասերը, ունեցանք այլ ձևախեղումներ: Մենք չենք խոսում կամ շատ քիչ ենք խոսում Երևանի տարածական ճարտարապետության մասին: Տխուր, շատ տխուր տպավորություն է թողնում այն՝ նայես Նորքի բարձունքից, Էրեբունի հնավայրից, թե Մոնումենտից: Գորշություն, ծավալների աններդաշնակ փոխհարաբերություն, գույնի, կանաչի աղքատություն:

Մոտ 2800-ամյա Երևանի պատմությունն ավելի առարկայական և ծանրակշիռ կլիներ, եթե այդ տևական ժամանակահատվածի յուրաքանչյուր բնութագրական փուլ դրսևորվեր մշակութային անընդմեջ և թանձր շերտերով, եթե «հավերժի ճամփորդ» դառնար այն ամեն արժեքավորը, ինչ ստեղծել է հազարամյակներում հայոց քանքարաշատ ոգին: Իր դարն ապրած, պետական գերակա շահով պայմանավորված, ֆիզիկական և բարոյական մաշվածության, տարերային ազդեցությունների և այլնի հետ կապված շինությունների իրացումն ու քանդումը օրինաչափ գործընթաց է, որ գործել է բոլոր ժամանակներում բոլոր երկրներում: Երևանի դեպքում հիմնականը բնակչության անբնական, հախուռն աճն էր և անհանդուրժողական վերաբերմունքը հոգևոր արժեքների հանդեպ, որոնք անկաշկանդ

սրբեցին մայրաքաղաքի դեմքը բնութագրող շատ սրբություններ: Բայց դա 1930-ական թվականներին...

Որքան էլ ուսանելի է անցյալի փորձը՝ դրական, թե բացասական առումով, քանդումներ, իրացումներ, վերափոխումներ կատարվել են նաև նոր ժամանակներում: Այսօր շատ ենք ափսոսում մեր անհաշվենկատ քաղաքաշինական գործունեության համար, սակայն այդ ափսոսանքի դասերը դեռ չեն դարձել կառուցապատման քաղաքականության սկզբունք, այսօր էլ շարունակում ենք քանդել և ափսոսալ... Ապացույցը մեր օրերում Լենինի հուշարձանի հիմնահատակ վերացումն է, «Բանվորի» արձանի տեղադրումն ու անհետացումը, պատմամշակութային մեծ արժեք ունեցող ու «պետության կողմից պահպանվող» այլ շենքերի, քաղաքաշինական կազմավորումների իրացումներն են, երբեմնի ուսումնական, մշակութային շենքերը բիզնեսի շահերին հարմարեցնելու եռանդը, կառուցապատումների խտացումը, կանաչ տարածքների, ջրային մակերեսների վերացումը... Անսպասելիորեն, նաև աներևակայելիորեն քանդվեցին ճարտարապետ Ն. Բունիաթյանի «Սևան» հյուրանոցի, ճարտարապետներ Ա. Թարխանյանի, Ս. Խաչիկյանի, Հ. Պողոսյանի Երիտասարդության պալատի շենքերը: Երկուսն էլ իրենց ժամանակի ուշագրավ, մայրաքաղաքի կերպարի մեջ մտած շենքերից էին, և դժվար է երևակայել, թե ինչով պետք է հատուցվի երևանցիներիս շատ հարազատ դարձած այդ կառույցների կորուստը, և արդյո՞ք այն կհատուցվի: Հյուրանոցի շենքը քանդվել է շուրջ 10 տարի առաջ՝ տեղում նորը կառուցելու ակնկալիքով: Բայց ո՞ւր է, ինչո՞ւ չի կառուցվում, ինչո՞ւ քանդվեց, եթե վերջնական, որոշակի ծրագիր չկար: Նույն կերպ և մյուսները. ե՞րբ է լցվելու Լենինի արձանի վերացումով պայմանավորված դատարկությունը: Ունենք քանդելու մի ցավալի օրինակ ևս, դա հայ կին առաջին դիպլոմավոր ճարտարապետ Ա. Տեր-Ավետիքյանի հեղինակությամբ 1937-1938 թթ. Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների հատման անկյունում կառուցված դպրոցի շենքն է, որում մեր օրերում տեղավորված էին ՀՀ ԳԱԱ լեզվի և տնտեսագիտության ինստիտուտները: Այդ շենքը 1930-ական թթ. կառուցված երևանյան լավագույն բնութագրական օրինակներից էր, որ շատ հարմար էր տեղադրված և սերտորեն կապվում էր միջավայրի հետ: Իրացման գլխավոր նպատակը բակի Կաթողիկե գողտրիկ եկեղեցին տեսողության դաշտ բերելն էր, որի լուծումը երկար ժամանակ է՝ չի գտնվում: Հապա ինչո՞ւ վերացվեց գոյություն ունեցող հոյակապ շենքը՝ առանց լուծումը նախապես ունենալու:

Կաթողիկեի տարածքը հարավային և արևմտյան կողմերից կառուցապատելիս, պարզ է, նկատի չի առնվել դպրոցական շենքի երբևէ քանդելը, և վերջինիս քանդելուց հետո երևում է տարածքին հարող կառույցների ողջ «մերկությունը»: Ուստի քաղաքաշինական-ճարտարապետական առումով շատ բարդ ու դժվարին խնդիր պետք է լուծել՝ շատ թե քիչ համարժեք արդյունքի հասնելու համար: Ի դեպ, ավելի վաղ նման տխուր ճակատագիր ունեցավ նույն հեղինակի մի ստեղծագործություն ևս՝ «Սասունցի Դավիթ» կինո-

թատրոնի շենքը, որի քանդումից անցել է շուրջ քառորդ դար, սակայն տեղում կառուցվողի ավարտը դեռ չի երևում:

Բարոյախոսությունը պարզ է. պետք է խուսափել քանդելուց, իսկ եթե դա անխուսափելի է, ապա նախապես պետք է հոգ տանել կառուցելու մասին՝ նախքան քանդելն ունենալով կատարյալ որա- կով, վերջնական և համոզիչ լուծումներ, այլապես կունենանք այն տխուր վիճակը, ինչ որ արդեն ունենք: Միայն հուշ ու ափսոսանք է մնացել մայրաքաղաքի անցյալի շատ կառույցներից, չնչին մասի վերաբերյալ կան փաստական նյութ, չափագրություններ, լուսանկարներ: «Ոչ մի մետր հող առանց «օբյեկտի»» կարգախոսն անկաշկանդ տարածում է թևերը: Դրանում էականը, արմատականը, մարդկային գործոնից զատ, քաղաքաշինական աննպաստ իրադրությունն է, օրենսդրական և գործադրական կարգապահության բացակայությունը, ինչի տխուր հետևանքները դրսևորվում են նաև հանրապետության այլ քաղաքներում: Մենք հպարտանում ենք մեր միջնադարյան ճարտարապետական համալիրների կուռ և միասնական հորինվածքներով, որոնք երբեմն մի քանի հարյուրամյակների արդյունք են՝ ստեղծված ճարտարապետների և քարգործ վարպետների տարբեր սերունդների ջանքերով: Այդ կուռ միասնության «գաղտնիքն» այն է, որ յուրաքանչյուր նոր կառույցի ժամանակ հաշվի են նստել արդեն գոյություն ունեցողների հետ, աշխատել են ոչ թե ստվերել, նսեմացնել, քանդել, վերացնել եղածը, այլ լրացնել, ներդաշնակել, երկխոսության մեջ մտնել նրա հետ: Մեր միջնադարյան վարպետների կենսահաստատ այդ սկզբունքը պատգամ է բոլոր ժամանակներին, նաև ճարտարվեստի այսօրվա և վաղվա մշակներին:

Կազմվում է ՀՀ տարածաշրջանների և արտերկրի հայ մշակույթի հուշարձանների համահավաքը, որում չեն ներառվում քանդված, գոյություն չունեցող կառույցները: Կարծում ենք՝ նպատակահարմար կլինի Կարմիր գրքի համանմանությամբ կազմել նաև Կարմիր համահավաք, որում, պարզ է, կընդգրկվեն այն հուշարձանները, որոնք այլևս գոյություն չունեն: Ինչո՞ւ պետք է հիշել մեր անցյալի հիշատակարանները, որոնցից ք-չերն են մնացել քաղաքի «հիշողության» մեջ: Դա անցյալի արժեքավորում է, կորուստների գիտակցում, դասեր ներկայի և գալիքի համար, քաղաքաշինական բարեկրթություն: Դա կարևոր կլինի պատմության, սերունդների իմացության և ճանաչողության, անցյալը ներկայի հետ կամրջելու, ինքներս մեզ ճանաչելու և վերաքննելու, նմանօրինակ սխալներ և բացթողումներ բացառելու համար, կունենա սթափեցնող, պատմամշակութային արժեքները պահպանելուն նպատակամղող նշանակություն: Ընդամենը 2-3 տասնամյակ առաջ կառուցված մեր շատ շենքեր ժամանակի քննությունը չեն բռնում: Պարզվում է՝ կոնստրուկտիվ հուսալիության, գեղարվեստական-հորինվածքային և որակական հատկանիշներով դրանք հեռու են բավարար լինելուց: Մասնավորը, ձեռք բերելով այդ շինությունները, իր առաջին գործն է համարում քանդել գոյություն ունեցողը և տեղում նորը կառուցել (սակավ դեպքերում է դիմում արդիականացման): Այդ բախտին

արժանացան կամ արժանանում են խորհրդահայ ճարտարապետության նվաճում համարվող մի շարք կառույցներ՝ Երիտասարդության պալատը, «Ռոսիա» կինոթատրոնը, Կինոյի տունը, «Զվարթնոց» օդանավակայանը, երևանյան կինոթատրոններից, ուսումնական, առևտրական շենքերից շատերը: Էլ չենք խոսում բնակելի տների զանգվածային վերակառուցումների, վերափոխումների մասին, որոնք արվում են՝ կանգ չառնելով շենքերի կայունությունը, անվտանգությունը, հարմարավետությունը և այլ գործոնները կարգավորող ոչ մի պահանջի առջև:

Ուրեմն, վերը նշված կառույցներով ժամանակին մեր հիացումը հիմնավորված չի եղել: Ասել է թե՝ եվրոպատուհան, եվրոդուռ, եվրոխողովակ, եվրոկղմինդր, եվրոսվաղ և այլ «եվրոհասկացությունների» շրջանակը պետք է մեծապես ընդլայնել և դրանում ներառել այն բոլոր հասկացությունները, գործընթացները, շինանյութերը, տեխնոլոգիաները, որոնք առնչվում են շինճարտարապետական ոլորտի հետ: Մեզանից անկախ, թե մեզանով պայմանավորված՝ ճարտարապետությունն էլ բռնել է «գլոբալի-զացիայի» ճանապարհը, և կարիք է զգացվում վերանայելու ճարտարապետության էության վերաբերյալ մեր ավանդական պատկերացումները: Ա. Չեխովն է ասել. «Չկա ազգային գիտություն, ինչպես որ չկա բազմապատկման ազգային աղյուսակ»: Աստված չանի, որ ապազգայինը տարածվի նաև ճարտարապետության վրա: Ներկայումս մայրաքաղաքի ողջ տարածքում կատարվում են լայնամասշտաբ կառուցապատման և բարեկարգման աշխատանքներ, կառուցվում են տրանսպորտային մայրուղիներ, հաղորդակցական ցանցեր և ենթակառուցվածքներ, ստորերկրյա ավտոկացարաններ և կայանատեղեր: Կառուցապատվում են Ալ. Թամանյանի փայփայած Հյուսիսային պողոտան, Գրլխավոր պողոտան, քաղաքի միջուկը կազմող մի շարք հանգույցներ, խոյանում են առավելապես նոր որակի և հորինվածքային լուծումներով բնակելի, վարչական, հասարակական շենքեր՝ հիմնականում բարձրահարկ, լույս ու վերելք խորհրդանշող, արդիական շունչ ու վեհություն պարունակող, իրենց մտահղացմամբ, գեղարվեստական-ոճական հատկանիշներով էականորեն տարբեր ավանդականից: Բայց իրավամբ երկմտանք է առաջանում՝ կապված կառուցապատման խտացման, շենքերի հարկայնության, ճակատները համատարած սալապատելու, կարմիր գծին ընդհուպ մոտենալու, բետոնի գեղարվեստական արտահայտչականության հնարավորությունը լիովին չօգտագործելու, «վարդագույն» Երևանը գունազրկելու, բնա-պահպանական խաթարումների և այլ առումներով:

Այսօր ուրիշ են սոցիալ-տնտեսական պայմանները, գեղեցիկի, հարմարավետության գնահատման չափանիշները. երեկվա մոտեցումները, հետահայաց տրամաբանությունը ժամանակավրեպ են և հակառակ օբյեկտիվությանն ու արդիական հասկացությանը. այդ նկատառումներով էլ պետք է քննել, գնահատել ձեռք բերածն ու կորցրածը: Հատկապես վերջին տասնամյակը բնութագրվում է հանրապետությունում պաշտամունքային կառույցների՝ եկեղեցիների, մատուռների, հոգևոր կենտրոնների շինարարությամբ (նաև ԱՊՀ

երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և այլ համայնքներում), ինչը, ուրախալի լինելով հանդերձ, նաև մտահոգիչ է, քանի որ հարկ եղած ուշադրությունը չի դարձվում կառույցների որակական հատկանիշներին, հորինվածքային նկարագրին, կերպարայնությանը (և դա ոչ միայն պաշտամունքային կառույցների, այլև հայոց մեծերին նվիրված հուշարձանների, խաչքարային արվեստի կոթողների և այլնի գծով): Նորակառույց եկեղեցիները, չնչին բացառությամբ, կերպավորում են մեր միջնադարյան նույնատիպ կառույցները՝ նմանակելով կամ պատճենելով դրանց ճարտարապետական-գեղարվեստական հատկանիշները: Տևական ժամանակ մեզանում դադարեց պաշտամունքային կառույցների շինարարությունը, մեկուսացանք միջազգային փոխհարստացնող համագործակցությունից, հետ ընկանք շինարարական-ճարտարապետական զարգացման ընդհանուր ընթացքից: Եվ այսօր մենք ընտրել ենք դյուրին, բայց ոչ արդյունավետ ճանապարհը. եկեղեցաշինության մոտ մեկդարյա ընդմիջումից հետո շարունակում ենք հենց այն կետից, որտեղ կանգ ենք առել՝ հաշվի չառնելով ժամանակի հզոր գործոնի ազդեցությունը, անհամեմատելի փոփոխությունները մտածողության, գեղարվեստական-ոճական չափանիշների, ըմբռնումների, կեցության զարգացման և այլ բնագավառներում: Մեր բարդ ժամանակներում այդ կառույցների համար ծախսվում են հսկայական միջոցներ, սակայն դրանք, ուտիլիտար պահանջները բավարարելուց զատ, քիչ բան են ավելացնում հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությանը: Յուրաքանչյուր կառույց, ներառյալ՝ եկեղեցի, իր ձևերով ու հորինվածքային տվյալներով առաջին հերթին պետք է լինի իր ժամանակի ծնունդը: Անցյալի նմուշների (թե՛ հայրենական, թե՛ օտար) հորինվածքային ձևերին ոչ ստեղծագործական մոտեցումը հակառակ է արվեստին, այն միշտ էլ խորթ է եղել հայի ստեղծագործական ոգուն, որի հատկանիշներն են ճշմարտացիությունը, նորարարությունը, ժամանակի ոճին և ըմբռնումներին հավատարմությունը:

1920-ական թթ. երկրորդ կեսին ակադեմիկոս Ալ. Թամանյանը նախագծում էր Երևանի օպերայի և բալետի շենքը (ժողտունը, ինչպես այն ժամանակ էին անվանում): Պարզ է, չկար դրա հայկական նախօրինակը, բայց կային անտիկ թատրոնը, Վերածննդի թատրոնը, արևմտաեվրոպական և ռուսական թատրոնները, սակայն Թամանյանը չգնաց դրանցից որևէ մեկի ընդօրինակման ճանապարհով. նա ստեղծեց ի՛ր թատրոնը, հայկական ազգային թատրոնը, որ համաշխարհային ճանաչման և ամենաբարձր գնահատանքի արժանացավ: Ժամանակին ոմանք առաջարկում էին Երևանի հոգևոր թեմի մայր եկեղեցին կառուցել Զվարթնոցի թորամանյանական վերակազմության կրկնօրինակմամբ: Շատ մեծ չէ տարբերությունը այդ առաջարկության և այսօրվա եկեղեցաշինական մոտեցումների միջև: Անհրնար է ապրել XXI դարում, բայց առաջնորդվել անցյալ դարերի գեղագիտական չափանիշներով, պատմությանը հանձնված ձևերի և հորինվածքների վերակենդանացմամբ: Մեկ-երկու տասնամյակ հետո, երբ կխամրի նորակառույց եկեղեցիների երեսպատման և հար-

դարանքի շուքը, կանցնի կառուցվածքային թարմությունը, դժվար կլինի տարբերակել դրանք իրենց միջնադարյան նախօրինակներից:

Կարող են վկայակոչվել ազգային ավանդույթների պահպանման, քրիստոնեական ծիսակարգի պահանջների բավարարման կամ այլ գործոններ, ինչը ոչ մի չափով չի կարող արդարացնել անցյալի ժառանգության նկատմամբ ոչ ստեղծագործական մոտեցումը, ազգային ավանդույթների, ձևերի և արտահայտչամիջոցների ոչ հաշվենը-կատ կիրառումը: Նույն ծիսակարգի պայմաններում մեր նախնիները ստեղծել են պաշտամունքային կառույցների և դրանց բաղադրամասերի բազմազան և հիասքանչ տարբերակներ: Ծիսակարգի պահանջները չեն կարող կաշկանդել կառույցների ժամանակակից հընչեղությունը, նորարարական մոտեցումները, գեղարվեստական և կառուցվածքային այլ լուծումներ: Նույն խնդիրը 1940-1950-ա- կան թթ. ծառացած էր Արևմտյան Եվրոպայի, Սկանդինավյան և այլ երկրների առջև, որոնք ևս, ինչպես Հայաստանը, ունեն եկեղեցաշինության միջնադարյան խոր ավանդույթներ: Բայց նրանք չգնացին այդ ավանդույթները մեխանիկորեն շարունակելու ճանապարհով, այլ դրսևո-րեցին միանգամայն նորարարական մոտեցում՝ նոր ժամանակների ոգուն և քաղաքակրթական զարգացման մակարդակին համապատասխան: Ոչ մի կրկնություն միջնադարյան պաշտամունքային կառույցների հորինվածքային ձևերի, ոչ մի ընդհանրություն՝ կերպավորման առումով: Ինչպես արտաքին տեսքում, այնպես էլ ինտերիերում ոչինչ չի հիշեցնում հինը՝ միջնադարյանը: Նոր որակ, նոր մտածողություն, կառուցվածքային և տեխնիկական նվաճումների իրացման վերելք: Դրանով հանդերձ՝ մենք հեռու ենք արևմտաեվրոպական պաշտամունքային կառույցների օրինակները կրկնելու, ներմուծելու գաղափարից, քանզի դրանցից յուրաքանչյուրն իր ժամանակի, իր երկրի և իր հեղինակի հոգու և դավանանքի կրողն է, նաև բոլոր դեպքերում չէ, որ դրանք կերպավորված են հարազատ պաշտամունքային կառույցի կոչմանը:

Հայ ժողովուրդը քրիստոնեական պաշտամունքի ավելի քան 1700-ամյա ժամանակաշրջանում ստեղծել է այդ պաշտամունքին ծառայող շատ արժեքավոր և բարձրարվեստ կառույցներ, որոնք որոշակիորեն տարբերվում են միմյանցից հորինվածքային, գեղարվեստական, կառուցվածքային և այլ հատկանիշներով: Զարմանք ու հիացմունք են պատճառում դրանք իրենց խոր իմաստավորմամբ, բամազանությամբ, ինքնատիպությամբ, ծավալատարածական, գունային, մասշտաբային կատարելությամբ, շինանյութի գեղարվեստական և կառուցվածքային հնարավորությունների սահմանային բացահայտմամբ: Ի՞նչ եղան, որտե՞ղ մնացին մեր բարի ավանդույթները, ստեղծագործական մոտեցումները, վարպետության և ան-հատականության կնիքը: Մեր նորօրյա եկեղեցիներն իրենց էությամբ հիշեցնում են խորհրդային ժամանակների տիպային և կրկնվող բաղադրամասերով շենքերի կառուցման ոչ երանելի ժամանակները, երբ այդ ճանապարհով ստեղծվում էին անդեմ, հմայքից և

գրավչությունից զուրկ թաղամասեր ու բնակավայրեր: Մեր խոսքը ոչ մի կապ չունի այսօր կառուցվող եկեղեցիները նախագծող ճարտարապետների շնորհքի և մասնագիտական օժտվածության հետ. նրանք առավելապես փորձառու վարպետներ են, գործնական աշխատանքի լավ դպրոց անցած և շատ արժեքավոր գործերի հեղինակ: Խոսքը վերաբերում է եկեղեցիների կերպարի ըմբռնմանը. այսօր մենք պե՞տք է կառուցենք եկեղեցիներ հազարամյակի խորքերից եկող կերպարով, թե՞ պետք է գնանք ստեղծագործական որոնումների ճանապարհով՝ փորձելով գտնել ազգային ավանդույթները հաշվի առնող, ժամանակակից շեշտ ու հնչեղություն պարունակող լուծումներ:

Ուզում ենք հիշել Հովհ. Թումանյանի արդիական և ուսանելի հոդվածը՝ «Ձևն ու հոգին». «Եկեղեցի ասելով գմբեթավոր էն շենքն են հասկանում, ուր սրբերի պատկերներ կան, վառած մոմեր... Ամեն երևույթ ունի իր արտաքին կերպարանքը-ձևը և ներքին իմաստը-հոգին: Ապրողը, գեղեցիկը, կատարյալը դրանց ներդաշնակությունն է, բայց էդ ներդաշնակությունը, դժբախտաբար, շատ է դժվար, և մարդիկ սովորաբար վազում են հեշտին. իսկ հեշտը ձևն է»[1]: Անհասկանալի է, թե ինչու և ինչպես է լինում, որ որակական ոչ բարձր հատկանիշներով նախագծերը կյանք են մտնում, որ մեր ճարտարապետության և, ընդհանրապես, մշակութային զարգացման համար կարևորություն ունեցող այդ խնդիրը բավարար ուշադրության չի արժանանում: Արդեն թափ է առնում ընդվզումը «նեոմիջնադարյան» եկեղեցաշինության դեմ, սակայն, ինչպես ասում են, «ձայն բարբառոյ յանապատի». լռում են նախարարությունները, ստեղծագործական միությունները, գիտական կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, Մայր Աթոռի ճարտարապետական խորհուրդը: Կարծում ենք, պետք է տեսականորեն և գործնականորեն արդյունավետ հունի մեջ դնել ճարտարապետական կառույցների նախագծման և իրականացման գործընթացները: Դրանք՝ որպես հանրապետական, ազգային կարևորության սուբյեկտներ, պետք է գտնվեն պետության, ազգային հոգածության ներքո: Լիովին նաև մեր ժամանակներին են վերաբերում ակադ. Ալ. Թամանյանի խոսքերը՝ ասված Հայաստանում իր գործունեության հենց արշալույսին՝ 1923 թվականին. «Ելնելով պետական շինարարական գործունեության հաջող իրականացման և պետական միջոցների լավագույն օգտագործման շահերից՝ անհրաժեշտ է, որ Հայաստանի հանրապետության տերիտորիայում կատարվող բոլոր աշխատանքները բխեն շինարարական ընդհանուր ղեկավար պլաններից և ենթարկվեն համապատասխան տեխնիկական, տնտեսական և գեղագիտական պահանջների»[2]:

Երկրի սոցիալ-տնտեսական վերափոխությունը, անկախ ու ազատ կենսաձևը պայմանավորում են գիտության նոր որակ, գիտական

---

[1] **Թումանյան Հ.,** *ԵԼԺ, հ. 6, Ե., 1994, էջ 177:*

[2] **Թամանյան Ալ.,** *Զեկուցագիր ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահին /Ալեքսանդր Թամանյան, Հոդվածներ, փաստաթղթեր, ժամանակակիցները նրա մասին, կազմող՝ Լ. Զորյան, Ե., 1960, էջ 17):*

մոտեցումների ու զարգացման ուղղությունների կատարելագործում, արդիականացում: Այդ նպատակով շատ կարևոր է գիտության փաստական հենքի հետագա հարստացումը, գիտական դրույթների և եզրահանգումների հիմնավորումը, անցումը փաստերի նկարագրման և վավերագրման մոտեցումից քննական-վերլուծական մեթոդին: Պետք է ձերբազատվել ժամանակի քննությանը չբռնած կարծիքներից, գաղափարաբանության թելադրանքով պայմանավորված կանխակալ դրույթներից և սահմանումներից: Քիչ է ստեղծել բարձր արժեքներ, այդ արժեքները պետք է խորությամբ ճանաչել, գնահատել, բացահայտել դրանց ազգային նկարագիրը, հորինվածքային և ոճական առանձնահատկությունները, պատմամշակութային կարևորությունը, պահպանել՝ ներկայացնելով դրանք սեփական ժողովրդին և աշխարհին: Խնդիրը հատկապես վերաբերում է մեզ՝ հայերիս, որ արժեքներ ենք ստեղծել աշխարհի շատ ծագերում՝ ներկայումս օտարի տնօրինության տակ գտնվող մեր պապենական տարածքներում, գաղթավայրերում, սփյուռքահայ համայնքներում, և այսօր այդ արժեքներից շատերը վերացել են կամ վերացման, ուծացման վտանգի տակ են:

Մշակութային ժառանգության արժեքները և ճարտարապետական ոլորտի գիտական ներուժը արժանիորեն ներկայացնելու համար պետք է առավել ընդլայնել հայերեն և օտարալեզու բարձրորակ և լայնամասշտաբ հրատարակությունները, ակտիվացնել գիտագործնական շփումները, գիտաժողովների, ցուցահանդեսների կազմակերպումը, զարգացնել զբոսաշրջությունը և հանգստի ինդուստրիան, գիտագործնական համագործակցության այլ ձևեր: Շատ կարևոր են ճարտարապետության պատմատեսական մի շարք հիմնախնդիրների հստակեցումը, ուսումնասիրության խորացումը, որոնք վերաբերում են ծագումնաբանության և ժառանգորդության, Հայաստանի և հարևան երկրների մշակութային կապի և առնչակցության հարցերին, հայ քաղաքակրթության տեղին և նշանակությանը, քաղկեդոնական դավանանքի կառուցվածքի ազգային նկարագրին, նոր տնտեսակարգի պայմաններում ճարտարագիտության սոցիալական դերին և այլն: Օրախնդիր են նաև գիտական, ուսումնակրթական և այլ կազմակերպությունների դերի բարձրացումը ճարտարապետական գիտության զարգացման գործում, կարևորումը, խրախուսումը, պայմանների ստեղծումը գիտահետազոտական աշխատանքների ծավալման համար:

Ինչպես ամեն մի գիտության, այնպես էլ ճարտարապետական գիտության զարգացումը հիմնականում պայմանավորված է ոլորտի գիտական կադրերով, որոնց պակասություն հանրապետությունը, կարծում ենք, չի զգում. վերջին 1,5 տասնամյակի ընթացքում Հայաստանում գիտական ատենախոսություններ են պաշտպանել 100-ից ավելի ճարտարապետներ: Գիտական ինչ հզոր ներուժ կունենար երկիրը, եթե այդ պատկառելի քանակն ուղեկցվեր նաև որակական բարձր ցուցանիշներով: Ցավոք, ցուցանիշներն այնքան էլ բարվոք չեն, շատերի գիտական գործունեությունը ավարտվում է թեկնածուական ատենախոսության պաշտպանությամբ, ցածր է ատենա

խոսությունների գիտատեսական և կիրառական մակարդակը: Այդ մասին 2008 թ. ապրիլի 25-ին ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովում խոսեց ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը՝ խնդիր դնելով էականորեն բարելավել վիճակը:

Նշված և չնշված ձեռնարկումներից զատ, ճարտարապետական գիտությունը փակուղային իրավիճակից հանելու համար կարևորվում է դրա ներառումը ակադեմիական գիտության ոլորտում՝ ՀՀ ԳԱԱ համակարգում ստեղծելով Արվեստի, ճարտարապետության և շինարարության առանձին բաժանմունք: Նաև օրենսդրական խընդիրների անբավարար լուծման հետևանքով է, որ հստակ չի գոր-ծում քաղաքաշինություն-ճարտարապետություն-շինարարություն համալիրը: Երևի թե հանրապետության բյուջեի, ներքին և արտաքին ներդրումների գերագույն մասը ծախսվում է շինարարության և ճարտարապետության ոլորտում, որի բնականոն գոր-ծունեության երաշխիք կարող է լինել ՀՀ Ազգային ժողովում և Հանրային խորհրդում շինարարության և ճարտարապետության հանձնաժողովի կամ ենթահանձնաժողովի ստեղծումը:

АРХИТЕКТУРНАЯ НАУКА НАВСТРЕЧУ НОВОМУ

ШАХКЯН Г. С.

Резюме

Трудные социально-экономические условия 1990-ых годов отрицательно сказались также на развитии архитектурной науки, в частности на архитектурном облике города Еревана, что нашло отражение в искажении ряда замыслов академика Ал. Таманяна, к примеру, претерпели изменения Кольцевой бульвар, Главный проспект, улица Корюна (Кирова) и т. д. Непропорциональная застройка города привела к исчезновению ряда ценных и важных по градостроительным и историко-культурным параметрам зданий. В последнем десятилетии в республике интенсивно строятся культовые сооружения: церкви, часовни, культовые центры, которые, за малым исключением, являют собой подражание либо повторение средневековых однотипных сооружений, их архитектурно-художественных признаков, что чуждо творческому духу армянских мастеров. Немалую роль в улучшении архитектурно-градостроительного положения может сыграть архитектурная наука, оказавшаяся в тупике, выход из которого возможен только с принятием действенных законодательных мер и их претворением в жизнь.